

Պրովեստորներ բոլոր յերկրների, Միացե՛ք.

Խ. Ս. Ն. Մ.—Ն. Գ. Ժ. Կ.  
ԱՆԴՐ. ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՐԴ. ԿՈՄԻՍԱՐԱՏԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

(ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺԻՆ)

## Հ Ր Ա Յ Ա Ն Գ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ  
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հաստատված Խ. Ս. Ն. Մ. Ներքին  
Դոքտոր ժողովրդական կամխարխառի  
կողմից 1934 թ. 9-ին ղեկավարելի և  
1935 թ. 31-ն ժաբաի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԻՐՆԵՐԳԳՈՐԾԺՈՂԿՈՄՍԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 5

346.1121

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ  
(ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ) ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

**Քաղաքացիական կացության ակտերը գրանցող  
որգանները**

Քաղաքացիական կացության ակտերի— ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության, անուն կամ ազգանուն փոխելու, վորդեգրության և հայրությունը հանաչելու մասին դիմումների գրանցումը (տոմարագրություն), նաև գործող կամ արխիվային գրքերում գրանցված ակտերի վերաբերյալ վկայականներ տալը քաղաքների բնակչության համար (Յերևան, Լենինական, Կիրովական) կատարվում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման քաղաքային բյուրոներում: Ազգանուն, կամ անուն փոխելու, վորդեգրության ղեպքերի և արխիվային գրքերում գրանցված ակտերի վերաբերյալ վկայականներ տալու խնդիրներից բացի, մնացած վերը հիշված ակտերի գրանցումը գյուղական վայրերում կատարում են գյուղական խորհուրդները:

Արխիվային գրքերում գրանցված ակտերի վերաբերյալ վկայականները տրվում են ՆԳԺԿ Վարչության չրջանային բաժանմունքների կամ քաղաքային բաժինների Ք Կ Ա. արխիվները:

Վորդեգրության ակտերի գրանցումը գյուղական

վայրերի համար կատարվում են ՆԳԺԿ Վարչության շրջանային բաժանմունքների կամ քաղաքային բաժինների Ք.Կ.Ա. արխիվներում:

Անուն կամ ազգանուն փոխելու ակտերի գրանցումը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի Յերևանի, Լենինականի և Կիրովականի քաղաքային բյուրոներում, ինչպես այդ քաղաքների, նույնպես և նրանց վարչական տերիտորիայի մեջ մտնող գյուղական վայրերի բնակչության համար: ՀՍԽՀ մնացած բոլոր վայրերի համար անուն կամ ազգանուն փոխելու ակտերի գրանցումը կատարվում է Յերևանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման քաղաքային բյուրոյում: ՆԳԺԿ Վարչության շրջբաժանմունքները սույն հրահանգի Ց-րդ գլխում ցույց տրված անուն կամ ազգանուն փոխելու մասին փաստաթղթերը և հայտարարությունները պետք է ներկայացնեն Յերևանի Քաղաքային բյուրոյին ՆԳԺԿ Վարչության Քաղաքացիական կացության Ակտերի Բաժնի միջոցով:

### ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

#### Ակտերի գրքերը վարելու ընդհանուր կանոններ

Քաղաքացիական կացության (ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն, հայրությունը ճանաչելու մասին, վորդեգրություն և ազգանունը փոխելու) ակտերը գրանցվում են հատկապես այդ նպատակի համար նախատեսված ակտերի գրքերում: Ակտերի գրքերը բաղկացած են հիմնական տալոններից ու կտրոններից և պետք է համարակալված, ժապավինված ու կնքված լինեն ՆԳԺԿ Վարչության համապատասխան օրգանի կնիքով:

Յուրաքանչյուր ակտ գրանցվում է յերկու օրինակից՝ հիմնական տալոնում և կտրոնում: Ակտերի առա-

ջին օրինակները մնում են գրքի մեջ, իսկ յերկրորդ օրինակները կտրվում են ամիսը մեկ անգամ և վոչ ուշ հաջորդ ամսի 2-ից ուղարկում են՝ ՔԿԱԳ-ի քաղաքային բյուրոները— ՆԳԺԿ-ի Վարչության Քաղաքացիական կացության ակտերի բաժնին, իսկ գյուղական ու այլանային խորհուրդները՝ ՆԳԺԿ Վարչության շրջանային բաժանմունք— քաղաքացիական կացության ակտերի բաժնի հրահանգչին:

Քաղաքացիական կացության ակտերի ձևերը բաժանված են առանձին հարցերի, վորոնք դասավորված են հատուկ համարակալված սյունյակներով: Քաղաքացիների իրավական փոխհարաբերությունների սահմանման և ազգաբնակչության բնական շարժման հաշվառման համար յուրաքանչյուր պատասխան ունի վորոշակի նշանակություն:

Ակտի գրանցման ժամանակ չի թույլատրվում սյունյակները առանց լրացնելու թողնել, բացառությամբ հրահանգում հիշատակված հատուկ դեպքերի:

Ազգաբնակչության բնական շարժման հաշվառման համար հատուկ և կարևոր նշանակություն ունեն հետևյալ հարցերը.—

ա) Այն անձանց զբաղմունքը, վորոնց մասին նշում է արվում ակտերում: Չբաղմունքի տակ պետք է հասկանալ տվյալ անձի մասնագիտությունը, պաշտոնը, արհեստը: Այս հարցի պատասխանը լրացնելու ժամանակ անհրաժեշտ է ճշգրիտ ցույց տալ տվյալ անձը վորտեղ (հիմնարկություն, գործարան, կոլխոզ և այլն) և ինչ աշխատանք է կատարում: Որինակ՝ Լենինականի քաղխորհրդի քարտուղար, Սարգսրաբաբի ՄՏԿ-ի գյուղատնտես, 2-րդ հիվանդանոցի բժիշկ, քիմիական տեխնիկումի ուսանող, Սանժյանի անվան կոլխոզի ստամ, անայնագործ-միայնակ և այլն: Անթույլատրելի չէ ճշգրիտ զբաղմունքը ցույց տալու փոխարեն զանազան անորոշ նշանակումներ կատարել, օրինակ՝ մետաղագործ, խորհրդային ծառայող, շինարարական բանվոր և այլն:



11-241969p

բ) Ազգութիւն: Այս հարցի պատասխանը լրացնելու ժամանակ չպետք է ազգութիւնը շփոթել դավանանքի (որինակ ազգութիւնը «թուրք» նշանակելու փոխարեն ցույց տալ նրա դավանանքը «մահմեդական»), և այն մարզի կամ հանրապետութեան անվան հետ, վորի սահմաններում է ապրում տվյալ անձը (որինակ՝ այսօրու չի կարելի դասել հայերի շարքը զուտ այն պատճառով, վոր նա ապրում է Հայաստանի սահմաններում, կամ ուկրաինացուն դասել ռուսների շարքը զուտ նրա համար, վոր նա ապրում է Մոսկվայի մարզում):

Ակտերի յերկրորդ որինակները՝ կարոններն ու զարկելուց հետո ակտերի գրքերի գրանցումներում փոփոխութիւն մտցնելու բոլոր դեպքերի մասին անպայմանորեն պետք է հայտնել այն որդանին, վորին ուղարկված են յեղել յերկրորդ որինակները:

Յերկրորդ որինակների ձախ անկյանը խփվում է այն որդանի անվանական շտամպը, վորը կատարել է գրանցումը:

Քաղաքացիական կացութեան ակտերի գրքերում գրանցումները կատարում են.—

ա) ՔԿԱԳ-ի քաղաքային բյուրոներում՝ վարիչը կամ գործավարը:

բ) Ավանային կամ գյուղական խորհուրդներում՝ խորհրդի քարտուղարը:

Քաղաքացիական կացութեան ակտը գրքում գրանցելուց հետո այդ գրանցում կատարողը պարտավոր է ընթերցել այն գրանցվողներին, վորոնք ծանոթանալուց հետո ստորագրում են յերկու որինակներն ել, վորին հանձնողում է ներքոհիշյալ պաշտոնատար անձանց ստորագրութիւնները, վորոնք կրում են ՔԿԱԳ-ի որդանի աշխատանքների համար պատասխանատուութիւն:

ա) ՔԿԱԳ-ի քաղաքային բյուրոյում, — բյուրոյի վարիչը և գործավարը:

բ) Ավանային կամ գյուղական խորհուրդներում — խորհրդի քարտուղարը:

Յեթե գրանցվողները անգրագետ են — նրանց փոխարեն բլանկի վրա ստորագրում են յերկու գրագետ վկաներ:

Գյուղական վայրերում գրանցվողների անգրագիտութեան և գրագետ վկաների բացակայութեան դեպքում, գրանցվողների փոխարեն կարող է ստորագրել ակտի գրանցմանը մասնակցութիւն չունեցող խորհրդի պաշտոնատար անձերից վորեւէ մեկը:

Գրանցումը ակտի գրքում, գրանցվողների ու գրանցողների ստորագրութիւնները կատարվում են պարզ, ընթեռնելի և միայն թանաքով:

Անթույլատրելի յէ հարցերի պատասխանը գրել կրճատ և ակտերի գրքերում կատարել ջնջումներ: Յեթե գրանցման պահին անհրաժեշտ է առաջին կամ յերկրորդ որինակներում կատարել վորեւէ լրացում կամ ուղղում, այդ առթիվ անպայմանորեն ակտի բլանկի վրա պետք է արվի դիտողութիւն, վորը առանձնապէս հաստատվում է կնիքով և գրանցում կատարողի ստորագրութեամբ:

Յեթե բլանկը փչացված է և նրա փոխարեն լրացվում է նորը, այդ դեպքում բլանկը թողնվում է ակտերի գրքում, ակտի ինչպէս առաջին, նույնպէս և յերկրորդ որինակների վրա արվում է դիտողութիւն «փչացված է»:

Բոլոր ակտերը համարակալվում են. յուրաքանչյուր բնույթի ակտերը (ծնունդ, մահ, ամուսնութիւն, ամուսնալուծութիւն, վորդեգրութիւն և այլն) պետք է ունենան իրենց առանձին համարակարգը: Ակտի առաջին և յերկրորդ որինակները համարակալվում են միևնույն համարի տակ. համարները նշանակվում են ակտի վերնագրում: Ակտը գրանցելու ժամանակ ցույց է տրվում գրանցման տարեթիվը, ամիսը և ամսաթիվը. ամիսն ու տարին գրվում են այդ նպատակի համար տպագրված սյունյակում ակտի ինչպէս առաջին, նույնպէս և յերկրորդ որինակի վերին ձախ անկյունում:

Ակտը կազմելու ժամանակ գրանցվողների կողմից

աված տեղեկութիւնները պետք է ստուգելն փաստաթղթերի հիման վրա գրանցում կատարողի կողմից և ըստուգելուց հետո միայն գրանցվի ակտի գրքում:

Ինքնութիւնը հաստատող հիմնական փաստաթուղթն է հանդիսանում բոլոր անցադրային սխտեմ անցկացված վայրերում — անցագրերը: Գյուղական վայրերում, անցագրի բացակայութեան դեպքում, նրան փոխարինում է կամ բավական է համարվում, վոր գյուղխորհրդի նախագահը կամ քարտուղարն անձամբ ճանաչում են:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Անցագրեր մտցրված վայրեր են հանդիսանում՝ քաղաքները, շրջանային կենտրոնները, բանվորական ավանները, յերկաթուղային և ջրային տրանսպորտը, խորհարդատեսութիւնները և նոր կառուցումները:

Քաղաքացիական կացութեան ակտերի գրանցման քաղաքային բյուրոներում և գյուղխորհուրդներում այբբենական գրքեր են պահվում, վորոնց մեջ գրվում են բոլոր գրանցված անձնավորութիւնների ազգանուն, անուն և հայրանունը:

ա) 50.000 հոգուց վոչ պակաս բնակչութիւն ունեցող խոշոր կենտրոններում այբբենական գրքեր են պահվում ակտերի առանձին տեսակների համար:

բ) Մնացած քաղաքներում և գյուղխորհուրդներում բոլոր տեսակի ակտերի համար պահվում են ընդհանուր այբբենական գրքեր:

### ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

#### Ծնունդների գրանցում

Ծնունդների գրանցումը պարտադիր է և կատարվում է յերեխայի ծննդավայրում կամ ծնողներից մեկի ապրելու վայրում:

Յերեխայի ծննդյան մասին պետք է հայտնել նրա

ծնվելուց 14 որվա ընթացքում գրավոր կամ բանավոր ձևով:

Հարգելի կամ վոչ հարգելի պատճառներով ծննդյան մասին ուշացած հայտնումը պետք է գրանցել ընդհանուր հիմունքներով, ըստ վորում հարգելի պատճառների բացակայութեան դեպքում արձանագրութիւն է կազմվում և ուղարկվում միլիցիային ժամկետն անցկացնող մեղավոր անձնավորութեանը տուգանելու համար:

Հարգելի պատճառներով ժամկետանց գրանցման դեպքում գրանցումը կատարվում է սովորական ձևով, բայց ծննդյան ակտի 16-րդ սյունյակում («հատուկ դիտողութիւններ») ցույց է տրվում, վոր գրանցումը այսինչ պատճառով ուշացել է այսքան որ, ամիս և այլն:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Ժամկետն անց կացնելու նկատմամբ հարգելի պատճառներ են համարվում՝ ծնողների մահը, կամ հիվանդութիւնը և տարերային պատահարները, վորոնց հետևանքով հայտնող անձի ապրելու տեղն և քաղաքացիական ակտերի գրանցման կետի մեջ հաղորդակցութիւնը կտրվում է:

Յերեխայի ծննդյան գրանցման մասին դիմում են տալիս հայրն ու մայրը միատեղ կամ նրանցից մեկն ու մեկը: Այն դեպքում յերբ ծնողները մահացել են կամ մեռել է նրանցից մեկն ու մեկը, իսկ մյուսի մասին տեղեկութիւններ չկան, ծննդյան մասին հայտնում են ծննդարեւութեանն ոգնութիւն ցույց տվող հիմնարկութիւնը, գյուղխորհուրդը կամ մտտիկ ազգականները:

Այն յերեխաները, վորոնք ծնվել են ամուսնութիւնը չգրանցված ծնողներից, գրանցվում են գրանցված ամուսնութիւնից ծնված յերեխաների հետ հավասար պայմաններով:

Յերեխայի ծննդի գրանցման ժամանակ պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը. —

ա) ծնողների անձնական վկայականը,

բ) ծնունդը հաստատող փաստաթուղթը (բժշկի կամ ծննդաբերութեանն ոգնող հիմնարկի վկայականը) :

Յեթե յերեխայի ծննդի գրանցման մասին դիմում են տալիս փոշ թե ծնողները, այլ ազգականները կամ ծննդաբերութեանն ոգնող հիմնարկները, պետք է ներկայացնել ծնողների մասին փաստաթղթային տվյալներ: Յեթե յերեխայի հայրը հայտնի չէ, այդ դեպքում ներկայացվում է միայն մոր անձնական վկայականը:

Ծնունդը գրանցելու ժամանակ յերեխային այն անունն է տրվում, ինչ վոր ծնողները կամ նրանց փոխաբինողներն են ցանկանում: Յերեխան գրվում է ծնողների ազգանունով: Իսկ յեթե ծնողները տարբեր ազգանուններ են կրում, այդ դեպքում ծնողների համաձայնութեամբ յերեխային տրվում է նրանցից մեկն ու մեկի՝ հոր կամ մոր ազգանունը:

Յեթե ծնողները համաձայնութեան չեն գա, այդ դեպքում յերեխայի ազգանունը վորոշվում է խնամակալութեան որդանների կողմից. մինչև այս հարցի վորոշումը խնամակալութեան որդաններում յերեխայի ազգանունը չի գրվում և ակտի առաջին սյունյակը (յերեխայի ազգանունը) մնում է առանց լրացնելու:

Յերկվորյակների (ջուխտակների) ծնունդը գրանցելիս ակտերի գրքում յուրաքանչյուր յերեխայի համար ծննդյան առանձին ակտ է լրացվում:

Գտնված կամ ընկեցիկ յերեխաների ծննդյան գրանցումը կատարվում է այն անձնավորութունների դիմումի համաձայն, վորոնք գտել են յերեխային կամ այն հիմնարկութեան հայտնումով, վորին ուղարկված է յեղել յերեխան, ըստ վորում պետք է անպայման ներկայացվի գրանցվող յերեխայի գտնվելու մասին միլիցիայի կամ գյուղխորհրդի արձանագրությունը:

Գտնված (ընկեցիկ յերեխային անուն, ազգանուն է տալիս դիմում տվողը, հիմնարկությունը կամ ծնունդը գրանցող որդանը: Գտնված (ընկեցիկ) յերեխաների ծնունդը գրանցելիս ծնողների մասին տեղեկություն

պարունակող սյունյակները չեն լրացվում, իսկ 16-րդ սյունյակում (հատուկ դիտողություններ) ցույց է արվում այն մարդու անունն ու ազգանունը կամ հիմնարկութեան անունն ու հասցեն, վորոնց հանձնվում է յերեխան խնամելու կամ դաստիարակվելու:

Մեռած ծնված յերեխաների ծննդյան գրանցումը նույնպես պարտադիր է և կատարվում է հատուկ սյունյակում:

## ԳԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

### Մահվան գրանցում

Մահվան մասին դիմում տրվում է յերեք օրվա ընթացքում գրավոր կամ բանավոր ձևով:

Այն տեղերում, վորտեղ բժշկական անձնակազմ կա, մահվան գրանցումը կատարվում է բացառապես բժշկական վկայականի հիման վրա: Բժշկական անձնակազմի բացակաութեան դեպքում մահացման փաստը հաստատում են վկաները:

Ինքնասպանութեան և դժբախտ դեպքերի հետեվանքով առաջացած մահվան գրանցումը՝ յեթե դիակները հայտնաբերված են՝ կատարում են ՔԿԱԳ-ը գյուղական խորհրդի կամ միլիցիայի կազմած արձանագրութեան կամ բժշկական վկայականի հիման վրա:

Զինվորական ծառայութեան մեջ գտնվողների և զինասպարտների մահվան գրանցման դեպքերի մասին ՔԿԱԳ որդանները պարտավոր են մի ամսվա ընթացքում հայտնել համապատասխան զորամասին:

Մահվան մասին ժամանակն անց կացրած դիմումները պետք է գրանցվեն ընդհանուր հիմունքներով թե հարգելի պատճառների առկայութեան և թե նրանց բացակայութեան դեպքում: Հարգելի պատճառների բացակայութեան դեպքում, արձանագրություն է կազմվում և ուղարկվում միլիցիայի բաժանմունքին տու-

գանելու այն անձին, վորը մեղավոր է ժամանակն անց կացնելու խնդրում:

Այնտեղ, վորտեղ մտքոված է անցազրային սիստեմ, ՔԿԱԳ-ը կամ գյուղխորհուրդը պարտավոր են պահանջել զխմողներից ներկայացնելու մեռած անձի անցազիրը: Մահվան գրանցման օրից 3 օրվա ընթացքում գյուղխորհուրդը պարտավոր է այդ անցազիրը ուղարկել միլիցիայի անցազրային սեղանին:

Անցազրի չներկայացնելը չի կանգնեցնում ակտի գրանցումը, բայց գրանցողը այդ դեպքում պետք է արձանագրություն կազմի և իսկույն ներկայացնի միլիցիայի բաժնին անցազիրը չներկայացնելու պատճառների մասին հետաքննություն կատարելու համար:

Ծնողներից վորեւ մեկի անցազրի մեջ գրանցված յերեխայի մահվան դեպքում, անցազիրը հետ չի վերցվում այլ կազմվում է արձանագրություն և ուղարկվում միլիցիայի բաժանմունք անցազրում համապատասխան փոփոխություն մացնելու համար:

Յեթե մեռնում է այն անձնավորությունը, վորի անցազրի մեջ գրված են յերեխաները, անցազիրը հետ է վերցվում և ուղարկվում միլիցիայի բաժանմունքին: Դիմողին բացատրվում է, վոր յերեխաները միլիցիայի կողմից գրվելու յեն այն անձնավորության անցազրում, վորի խնամքի տակ պետք է գտնվեն նրանք:

ԽՍՀՄ Կենտրոնական Նախագահության 1934 թվի 7/8 վորոշման համաձայն Միութենական շքանշաններով և պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձնավորությունների մահացման և անհայտ բացակայությունների դեպքերի մասին ԽՍՀՄ-ի ՆԳՏԿ Քաղաքացիական Կացության Ակտերի Բաժինը պետք է տեղեկացնի Համամիութենական Կենտրոնական Գործազիր Կոմիտեյի Նախագահության քարտուղարությանը:

Գյուղական վայրերի և քաղաքների ՔԿԱԳ-ների որդանները մահվան գրանցման ժամանակ պետք է պարզեն և իմանան մահվան մասին դիմում տվող անձնավորու-

թյուններից, ազգականներից, հարևաններից, մոտիկ ծանոթներից և այլն թե արդյոք մեռածները շքանշանով պարգևատրված չեն յեղել: Այն դեպքերում, յերբ մեռածները Միության շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված են լինում՝ ՔԿԱԳ-ի որդանները պետք է այդ տեղեկությունները հայտնեն հանրապետական, յերկրային, մարզային քաղկացության ակտերի գրանցման բաժիններին, իսկ վերջիններս Համամ. ՆԳՏԿ Քաղ. Կաց. Ակտ. բաժնին, ցույց տալով մեռածի ազգանունը, անունը և հայրանունը:

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

#### Ամուսնության գրանցում

Ամուսնության գրանցման մասին կարող են դիմել ըստ իրենց բնակության վայրերի յերկու ամուսնացողները կամ նրանցից մեկն ու մեկը գրավոր կամ բանավոր ձևով: Ամուսնության գրանցումը տեղի յե ունենում միմիայն յերկու ամուսնացողների ներկայության դեպքում պահպանելով հետևյալ պայմանները՝

ա) Յերկու ամուսնացողները պետք է չափահաս լինեն. ՀՍՍՀ-ի ամուսնության և խնամակալության օրենսդրքով չափահասության տարիք է սահմանված— տղամարդկանց համար 18, կանանց համար— 16:

բ) ամուսնացողների փոխադարձ համաձայնությունը:

գ) ամուսնացողները փոխադարձ տեղյակ պիտի լինեն իրար առողջության մասին:

Ամուսնությունները չեն գրանցվում հետևյալ դեպքերում՝

ա) Յեթե ամուսնացողներից մեկը կամ յերկուսն ել

արդեն գրանցված կամ չգրանցված (փաստացի) ամուսնութեան մեջ են մեկ ուրիշի հետ:

բ) յեթե ամուսնացողներն իրար ազգական են վերընթաց կամ վարընթաց գծով:

Ծանոթութիւն.— Վերընթաց կամ վարընթաց գծով ազգակիցներ են համարվում՝ պապը, տատը, տղան, դուստրը և թոռը:

գ) Յեթե ամուսնացողներից մեկը կամ յերկուսն եւ հոգեկան հիվանդ են ճանաչված:

դ) յեթե ամուսնացողները հարազատ կամ խորթ յեղբայրներ և քույրեր են:

Ծանոթութիւն.— Հարազատ յեղբայրներ ու քույրեր են համարվում այն զավակները, վորոնք ծնվել են նույն հորից և նույն մորից: Խորթ համարվում են նրանք, վորոնք նույն մորից են, բայց տարբեր հայրերից, կամ նույն հորից և տարբեր մայրերից:

Յեթե ամուսնութեան գրանցման ժամանակ վորեւ մեկից տոմագրութեան դեմ որինական արգելքներ լինելու մասին հայտարարութիւն ստացվի, պաշտոնյան պարտավոր է կասեցնել գրանցումը և պահանջել, վոր հայտարարութիւն անողը համապատասխան փաստական ապացույցներ ներկայացնի այն ժամանակամիջոցում, վոր նրան կտա քաղ. կացութ. ակտեր տոմարագրող մարմինը (որենագրքի հոդ. 138):

Ամուսնութեան գրանցման ժամանակ անհրաժեշտ է պահանջել ինքնութիւնը և տարիքը վավերացնող փաստաթղթեր:

Ամուսնացողներին իրավունք է տրվում ընտրելու ամուսինների համար ընդհանուր ազգանուն, վորը պետք է կրեն ամուսնութիւնից հետո կամ մնալ իրենց նախա-ամուսնական ազգանուններով:

Խորհրդային և ոտարերկրյա քաղաքացիների միջև, նաև ոտարերկրացիների միջև տեղի ունեցող ամուս-

նութիւնների գրանցումը կատարվում է ՔԿԱԳ-ի որդանների կողմից ընդհանուր հիմունքներով:

Ամուսնութիւնը գրանցելուց հետո ամուսնացողներին տրվում է վկայական ամուսնութեան մասին:

### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԳ Ամուսնալուծութեան գրանցում

Ամուսնալուծութեան մասին դիմում են տալիս ՔԿԱԳ-ին ամուսինների կամ նրանցից մեկի ընկալալարում: Ամուսնալուծութիւնը ՔԿԱԳ-ի կողմից կատարվում է ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ կամ նրանցից մեկն ու մեկի ցանկութեամբ: Փաստացի ամուսնութիւնը (չտոմարագրված) կարող է լուծվել այն ժամանակ, յեթե այն հաստատված է գատարանի կողմից: Յեթե փաստացի ամուսնութիւնը գատարանի կողմից չի ճանաչված, այդ դեպքում ՔԿԱԳ-ն ամուսնալուծութեան մասին դիմում չի ընդունում:

Ամուսնալուծութեան գրանցումը ՔԿԱԳ-ը կատարում է այն փաստաթղթերի հիման վրա, վորոնք վավերացնում են ամուսնացողների ինքնութիւնը և նրանց ամուսնութեան մեջ գտնվելու հանգամանքը:

Յեթե դիմողների ամուսնութեան մասին վկայական չկա, այդ դեպքում նրանցից ստորագրութիւն է վերցվում իրենց ամուսնութեան գրանցման տեղի ու ժամանակի նկատմամբ:

Բաժանվող ամուսիններն իրավունք ունեն ամուսնալուծութիւնից հետո կրելու իրենց ամուսնական կամ նախաամուսնական ազգանունները:— Ամուսիններից մեկն ու մեկը դրա դեմ առարկելու դեպքում մյուսը պետք է կրի նախաամուսնական ազգանունը:

Յեթե բաժանվողները յերեխաներ ունեն, վերջիններս ծնողների ամուսնալուծութիւնից հետո կրում են այն ազգանունը, վորով գրանցվել են ծննդյան տոմարագրութեան ժամանակ:

Գրանցում կատարողը պետք է պարզի թե բաժան-  
վողները յերեխաներ տնե՞ն, ո՞ւմ մտա են նրանք մնում  
և այն գումարի չափը, վորը ծնողները տալու յեն յերե-  
խաների ապրուստի համար, ինչպես նաև այն նպաստի  
քանակը, վորը տրվելու յե անաշխատունակ ամուս-  
նուն:

Կայացած համաձայնությունը մտցվում է ամուս-  
նալուծության ակտերի գրքի «Գ» լիտերի Ց-րդ սյուն-  
յակում, համաձայնության բովանդակությունը լրիվ  
գրանցվում է ամուսնալուծության վկայականի մյուս յե  
բեսում (տրվում է յուրաքանչյուր բաժանվողին առան-  
ձին) և հաստատվում կնքված ու պաշտոնատար անձանց  
ստորագրությամբ:

Գրանցում կատարողը պարտավոր է բացատրել,  
վոր կայացած համաձայնությունը նախկին ամուսիննե-  
րից յուրաքանչյուրին և յերեխաներին չի գրկում իրա-  
վունքից՝ ապագայում դատարանի միջոցով ավելի մեծ  
չափով ապրուստի միջոցներ պահանջելու, քան այդ  
սահմանված է յեղել ամուսնալուծության ակտը գրան-  
ցելու ժամանակ:

Համաձայնության մեջ հիշատակված պարտավո-  
րությունները չկատարելու դեպքում շահագրգռված  
անձերը կարող են դիմել ժողովրդական դատարանին՝  
քաղաքացիական դատավարության որենսգրքի 210  
հոդվ. «Գ» կետի համաձայն դատական հրաման ստա-  
նալու համար (որ. հոդ. 23):

Յերեխաների այլ և կարոտյալ և անաշխատունակ  
ամուսնու ապրուստի միջոցի չափի վերաբերյալ ամուս-  
նալուծողների կողմից համաձայնություն չլինելու դեպ-  
քում, այդ առթիվ համապատասխան դիտողություն է  
տրվում ակտի մեջ և համապատասխան ձևակերպված  
գրանցում կատարվում ամուսնալուծության վկայակա-  
նի մյուս յերեսին:

Ամուսնալուծության ակտը գրանցող պաշտոնյան  
պարտավոր է առանձնակի ուշադրություն դարձնի մոր

և յերեխայի շահերի պաշտպանության հարցերին, յու-  
րաքանչյուր առանձին դեպքում բացատրելով մոր իրա-  
վունքները դատարան դիմելու մասին:

Յերբ ամուսնությունը լուծվում է մի կողմի հայ-  
տարարության հիման վրա, ՔԿԱԳ-ը պարտավոր է  
գրանցումը կատարելուց հետո Յ որվա ժամկետում տե-  
ղեկացնի մյուս ամուսնուն հայտարարություն տվողի  
ցույց տված հասցեյով:

Ձինվորական ծառայության մեջ գտնվողների ա-  
մուսնալուծության մասին ՔԿԱԳ-ը պարտավոր է յերեք  
օրվա ընթացքում հայտնել համապատասխան գորամա  
ծառայության ցուցակի ընտանեկան գրության սյուն-  
յակն ուղղելու համար:

Ոտարահպատակների ամուսնալուծությունը, վո-  
րոնց ամուսնությունը կայացել է Սորհրդային Միու-  
թյան սահմաններից դուրս, նրանց պետության որեն-  
քով, կատարվում է այնպես, ինչպես խորհրդային քա-  
ղաքացիներինը:

Արտասահմանում ապրող և ԽՍՀՄ քաղաքացի հան-  
դիսացող ամուսնուց բաժանվելու մասին դիմում տա-  
լու դեպքում արտասահմանում ապրող ամուսինը տե-  
ղեկացվում է Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմի-  
տարիատի միջոցով:

ՎՈՒՆ ՅՈՒԵՐՈՐԴ

Վորդեգրման տոմարագրում

Վորդեգրման տոմարումը ՔԿԱԳ-ը կատարում է  
բացառապես խնամակալության և հոգաբարձության  
օրդանի վորոշման հիման վրա: Վորդեգրումը թույլա-  
տրվում է փոքրահասակների (մինչ 14 տարեկան) և ան-  
չափահասների նկատմամբ (մինչև 18 տարեկան): Տասր  
և ավելի տարիք անցող յերեխաների վորդեգրումն ա-  
ռանց նրանց համաձայնության չի թույլատրվում:

1696712 11



Վորդեգրել կարող են բոլոր քաղաքացիները բացառությամբ ներքոհիշյալ անձանց.

1) Ձայնի իրավունքից զրկվածները.

2) Դատարանի կողմից ծնողական իրավունքից զրկվածները.

3) Անչափահասները:

Յեթե միասին ապրող ամուսիններից մեկը վորեկե յերեխայի վորդեգրում է, այդ դեպքում անհրաժեշտ է մյուս ամուսնու համաձայնությունը:

Վորդեգրումը կարող է գրանցվել Հոգաբարձություն և Խնամակալություն որդանի վորոշման հիման վրա վորդեգրողների ներկայություն կամ առանց նրանց ներկայություն:

Վորդեգրվողը կարող է կազմել վորդեգրողի ազգանունով, իսկ 10 տարեկանից բարձր վորդեգրվողի համաձայնությամբ թույլատրվում է կրել նաև վորդեգրողի հայրանունը:

Վորդեգրման ակտը գրանցելուց հետո ՔԿԱԳ-ը՝ յեթե նրա մոտ է գտնվում այդ յերեխայի ծննդյան սկզբնական գրանցումը, համապատասխան ուղղում է մտցնում դրա մեջ և հայտնում է համապատասխան քաղաքացիական կացություն ակտերի յերկրային, մարզային և հանրապետական բաժանմունքներին յերկրորդ որինակների վրա նշումներ կատարելու:

Իսկ յեթե ծննդյան սկզբնական գրանցումը պահվում է մի ուրիշ տեղ, այդ դեպքում ՔԿԱԳ-ը պարտավոր է 3 օրվա ընթացքում հայտնել կատարված վորդեգրման մասին համապատասխան ՔԿԱԳ-ին ծննդյան գրքում նշումներ կատարելու համար:

### ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ազգանունները և անունները փոխելու գրանցում

Բոլոր չափահաս անձինք կարող են իրենց ցանկություն կամ փոխել ազգանունը կամ անունը, կամ թե անու-

նը և թե ազգանունը, յեթե դրանից չեն սուժում պետություն կամ ուրիշ քաղաքացիների շահերը:

Անունը կամ ազգանունը փոխել ցանկացողը դիմում է ըստ իր բնակություն վայրի: Դիմումը արվում է գրավոր ձևով, վորի մեջ ավողն իր մասին հայտնում է հետևյալ տեղեկությունները.

1. Ազգանուն, անուն և հայրանուն:

2. Ծննդյան տեղն ու ժամանակը.

3. Ընտանեկան և սոցիալական դրությունը.

4. Զինվորական ծառայություն դրությունը:

5. Ազգանվան կամ անվան փոխելու պատճառները:

6. Նոր ազգանունը և անունը:

7. Տեղեկություններ անչափահաս դավակների մասին, նրանց անունները և տարիքը:

8. Դիմողի ճիշտ հասցեն:

Դիմումին պետք է կցել ինքնությունը վավերացնող փաստաթղթերը և Ֆինոբանից տեղեկանք այն մասին, վոր դիմողը հարկերի և այլ մուծումների թերավճար չունի:

ՔԿԱԳ-ը ընդունելով ազգանվան և անվան փոխելու մասին դիմումը, ստուգում է բոլոր փաստաթղթերը և հարցնում ՆԳԺԿ-ի վարչության շրջանային բաժանմունքը ազգանունը կամ անունը փոխելու արգելքների մասին:

Բացի դրանից ՔԿԱԳ-ը պետք է տեղական պաշտոնական թերթում հրապարակի ազգանվան կամ անվան փոխելու մասին: Թերթում հրապարակելը կատարվում է դիմողի հաշվին:

Ազգանվան կամ անվան փոխելու հարցի լուծումը պետք է տեղի ունենա վոչ ուշ, քան մինչև յերկու ամիս թերթում այդ մասին հրապարակելուց հետո:

ՆԳԺԿ-ի վարչության շրջանային բաժանմունքից ազգանունը կամ անունը փոխելու դեմ առարկություն ոտանալու դեպքում ՔԿԱԳ-ը դիմողին մերժման ծանուցազիր է ուղարկում:

Ազգանունը փոխելու մասին մերժում ստանալու դեպքում, թերթում հրատարակելու հետ կապված ծախսերը չեն վերադարձվում:

Ազգանունը կամ անունը փոխելու ակտի գրանցումը կատարվում է միայն զիմողի ներկայությամբ:

Խորհրդային Միության տերրիտորիայում ապրող ստարերկրացիները ազգանունը կամ անունը փոխելու իրավունքից չեն ուզավում:

Ծննդյան և ամուսնության ակտերի գրանցման գրքերում ազգանունի կամ անվան ուղղումներ են մտցրվում:

Ազգանվան կամ անվան փոխելու մասին ՔԿԱԳ-ը վկայական է տալիս, վորը զիմողը ներկայացնում է համապատասխան հիմնարկություններին յուր անձնական վկայականում ազգանունը փոխելու մասին նշումներ կատարելու:

Յեթե ծննդյան և ամուսնության գրանցումներն ուրիշ տեղ են պահվում, այդ դեպքում ՔԿԱԳ-ը յերեք օրվա ընթացքում ծանուցագիր է ուղարկում գրքերում համապատասխան ուղղումներ մտցնելու համար:

Զինվորական ծառայողների, զինակոչիկների և զինապարտ անձանց ազգանունը կամ անունը փոխելու մասին ՔԿԱԳ-ը պարտավոր է հայտնել նաև համապատասխան զինվորական հաշվեառում կատարող օրգանին:

### ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

#### Հայրությունը և անաչելու մասին դիմումների ընդունելությունը

ա) Հայրությունը և անաչելու մասին դիմումների բլանկների գիրքը վարելու մասին: Հայրությունը ճանաչելու մասին դիմումների բլանկների գիրքն, ինչպես և բոլոր ակտային գրքերն ունեն յերկու տալոն (հիմքային և կտրոն) և հայրությունը ճանաչելու դիմումը լր-

րացվում է յերկու օրինակից (առաջինը լրացվում է հիմքային տալոնի վրա, իսկ յերկրորդը կտրոնի վրա):

Առաջին օրինակը մնում է գրքում, իսկ յերկրորդը օրինակը տրվում է դիմում տվողին:

բ) Հայրությունը և անաչելու դիմումի բլանկը լրացնելու կարգն ու դիմումներն ընդունելու պայմանները: Հայրությունը ճանաչելու դիմում կարող է անել մայրն իր բնակության վայրի ՔԿԱԳ-ին գրավոր կամ բանավոր ձևով՝

- 1) Հղիության ժամանակաշրջանում
- 2) Յերեխայի ծնունդը գրանցելու ժամանակ:
- 3) Յերեխայի ծնունդն գրանցելուց հետո ուզած ժամանակը:

Դիմումն ընդունողը պետք է մորից պահանջի ինքնության վկայական, իսկ յեթե դիմումը տրվում է հղիության ժամանակ, բացի դրանից նաև հղիության մասին բժշկական վկայական:

Ծանոթություն. — Գյուղական վայրերում, յերբ դիմողին անձամբ ճանաչում են, նրանից ինքնության վկայական չի պահանջվում:

Ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն ՔԿԱԳ-ն օրգանը մտած դիմումի մասին հայտնում է այն անձին, վորը յերեխային հայր է կոչվում: Յեթե մի ամսվա ընթացքում նրանից ՔԿԱԳ առարկություն ստանա հայրությունը ճանաչվելու նկատմամբ, ապա նորից է հայտնում նրան, վոր նա գրանցված է. կամ պետք է գրանցվի իբրև հայր (յեթե դիմումը տրված է յեղել հղիության ժամանակ) և վոր նա իրավունք ունի մի տարվա ընթացքում դատական կարգով հերքելու յուր հայրությունը:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԳ

Քաղաքացիական կացութեան ակտերի ուղղումը

Ամուսնութեան, ընտանիքի և խնամակալութեան Որենագրքի 118—119 հոդվածներով սահմանված և քաղաքացիական կացութեան ակտերի գրքերի գրանցումներում ուղղումներ կատարելու կարգը: Գրանցումների ուղղումները կատարում են ՔԿԱԳ-ը՝ վոչ ցածր քան չրջանայինը:

Ծանոթութիւն.— Ուղղումների վերաբերյալ վիճելի կամ կասկածելի խնդիրները լուծվում են դատական կարգով:

ՔԿԱԳ-ն ուղղումները կատարում են հետևյալ դեպքերում:

Յեթե ծնողների հանձնարարութեամբ ծնունդը գրանցելու համար միջնորդութիւն հարուցող անձը յերեխային այս կամ անունը կոչելու մասին սխալ տեղեկութիւն է հաղորդել և ծնողները խնդրում են փոխել այդ անունը:

Յեթե վորպես յերեխայի հայր գրանցված անձը մահացել է և մայրը հայտարարում է թե յերեխայի հայրը հանդիսանում է մի այլ անձնավորութիւն և վերջինս ճանաչում է իրեն վորպես հայր և այլն:

Դատական կարգով հետևյալ ուղղումներն են կատարվում.

Յեթե հոր մահից հետո հարց է ծագում հայրութիւնը վորոչել, վորը նրա կենդանի ժամանակ գրանցված չի յեղել վորպես հայր:

Յեթե մոր ցուցմունքով յերեխայի հայր գրանցված անձը չի ճանաչում իրեն վորպես հայր, յեթե հայտարարողները կամ նրանցից մեկն ու մեկը հաստատում է վոր գրանցումը ճիշտ չի կատարված և այլն:

Ուղղում կատարելուց հետո ՔԿԱԳ-ը հայտնում է

այն ՔԿԱԳ-ին, վորը կատարել է ակտի առաջին գրանցումը, գրանցման գրքում համապատասխան ուղղում կատարելու համար:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՎՄԵԿԵՐՈՐԳ

Քաղաքացիական կացութեան ակտերի վերականգնում

Քաղաքացիական կացութեան ակտերի գրանցման (տոմարագրութեան) վերականգնումը կատարվում է քաղաքներում՝ ՔԱԿԳ բյուրոներում, գյուղական վայրերում, գյուղխորհուրդներում: Վերականգնումը տեղի յե ունենում այն դեպքերում, յերբ շահագրգռված անձինք զրկված են գրանցման պատճեն ստանալու հնարավորութիւնից ակտային գրքերի կորստյան և վոչնչացման, վոչ լրիվ գրանցումների պատճառով կամ արտասահմանից ստանալու անհնարավորութեան դեպքերում:

Շահագրգռված անձը յուր բնակութեան վայրում միջնորդութիւն է հարուցում տեղի ժողդատարանի առաջ վերականգնելու մասին, անպայմանորեն կցելով վերոհիշյալ պատճառներով պատճեն ստանալու անհնարինութիւնը հաստատող տեղեկանքներ:

Շահագրգռված անձի անչափահասութեան դեպքում դիմումը ներկայացնում են այն անձինք, վորոնց խնամքի տակ է գտնվում նա:

Գրանցումների վերականգնումը ՔԿԱԳ-ի կողմից տեղի յեն ունենում ժողդատարանների վորոշումների հիման վրա:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒՅԵՐՈՐԳ

Այբբենական գրքերը և նրանց վարելու կարգը

Հիսուն հազարից ավելի բնակչութիւն ունեցող քա-

ղաքներում ըստ առանձին ակտային գրքերի յուրաքանչյուր տարվա համար տարվում է ալֆավիտի (այբբենական) գիրք:

Մնացած քաղաքներում, գյուղերում և բանվորական ավաններում բոլոր տեսակի ակտերի գրքերի համարտ տարվում է մի ընդհանուր ալֆիավիտային (այբբենական) գիրք, բայց յուրաքանչյուր տարվա համար առանձին:

ԲՈՂՈՐ ՏԵՍԱԿԻ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՅՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԼՖԱՎԻՏ

Ազգանուն, անուն և հայրանուն	Ակտի անունը	Գրանցման №-ը	Գրքի №-ը	Գրանցման ժամանակը	Գրանցման վայրը	Նշանակումներ կրկնակի վկայականներ տալու մասին
Հակոբյան Ա. Ս.	Ծնունդ	25	1	1/2-34թ.	Հայթաղ	1/9-34 թ.
Անդրիասյան Կ. Վ.	Մահ	170	5	25/6-34թ.	Փարաբար	—

ԱԼՖԱՎԻՏ ԳՐԱՆՅՈՒՄՆԵՐԻ ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱՐ

Ազգանուն, անուն, հայրանուն	Գրանցման №-ը	Գրքի №-ը	Գրանցման ժամանակը	Գրանցման վայրը	Նշանակումներ կրկնակի վկայական տալու մասին
Միրաբյան Ս. Հ.	620	6	8/2-35 թ.	Յերեվան	5/5-35 թ.

Ամուսնությունը գրանցելու դեպքում ալֆավիտում գրվում է այն ազգանունները, վորոնք կրել են ամուսնացողները մինչ գրանցվելը:

Ամուսնալուծությունը գրանցելու դեպքում ալֆավիտում գրվում են նրանց ամուսնական ազգանունները:

Ազգանունը փոխելու դեպքում ալֆավիտում մտցվում է հին և նոր ազգանունը:

ԻԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԻ

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ վկայականներ տալը

Ա. ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԳՐՔԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Քաղաքացիական կացության ակտերը գրանցելու մասին վկայականների բլանկներ ունեցող գրքերը բազմապես են կտրոնից և հիմքից. կտրոնի վրա գրանցվում է վկայականը, իսկ հիմքը մնում է գրքի մեջ:

Վկայականների գրքերը համարակալվում, ժապավինվում են և ՆԳԺԿ համապատասխան որդանի կնիքով կնքվում. վկայականների բլանկների վրա ամիս, ամսաթիվը գրվում է տառերով և գրանցվում է թվանշաններով:

Վկայականները համարակալվում են նույն համարներով, ինչ համարներով, վոր գրանցված են ակտերի բլանկները:

Բ. ՔԱՂԱՔՈՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր ակտ գրանցելու ժամանակ անձամբ հայտարարողին տրվում է վկայական: Ակտերից և հին մետրիկական գրքերից կորցրածի փոխարեն վկայականներ տրվում է ՔԿՍԳ որդանների կողմից քաղաքացիների, հիմնարկությունների, ձեռնարկությունների գրավոր կամ բանավոր հայտարարության հիման վրա. կրկնակի վկայականները տրվում են միայն այն դեպքում, յերբ կասկած չկա կրկնակի վկայական ստանալու իրական անհրաժեշտության մասին: Տրվող կրկնակի վկայականի վերին մասում նշանակվում է— ինչ նպատակի համար է տրված այն:

Նման կրկնակի վկայականներ տալը կատարվում է առանձին «կրկնակի վկայականների» գրքից:

### ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԳ

Ակտերի յերկրորդ որինակների առաջմասն և ամսական հաշվետվություն ներկայացնելու կարգը

Սույն հրահանգով սահմանված կանոնների համաձայն ակտերի յերկրորդ որինակները լրացվում են առաջին որինակի հետ միաժամանակ:

Ամիս մեկ անգամ վոչ ուշ հաջորդ ամսի 2-ից նրանք ներկայացնում են՝

ՔԿԱԳ-ի քաղաքային բյուրոները— քաղկացուլթյան ակտերի բաժին, իսկ գյուղական և ավանային խորհուրդները՝ ՆԳԺԿ շրջանային օրգանը— ՔԿԱ բաժնի շրջանային հրահանգչին:

Նրանց հետ միասին ուղարկվում է ուղեգրացուցակը, վորում ցույց է տրվում ուղարկվող ակտերի քանակն ըստ գրանցման տեսակների (ծնունդ, մահ, ամուսնուլթյուն և ամուսնալուծուլթյուն) և նրանց համարները: Մահվան մասին ակտերին պետք է կցված լինեն բժշկական վկայականներ: Ակտերի յերկրորդ որինակների ցուցակում համարները պետք է ճշգրիտ համապատասխանեն ակտային գրքերում նշանակված համարներին:

Վորդեգրուլթյան, հայրուլթյունը ճանաչելու, աղ-զանուն կամ անուն փոխելու առթիջ ՔԿԱԳ քաղբյուրոնե-րը ցուցակում պետք է ցույց տան ամսվա ընթացքում կայացած ակտերի ընդհանուր քանակը: Յեթե հաշվետու ամսում այս կամ այն տեսակի ակտերի գրանցում տեղի չի ունեցել, այդ մասին ցույց է տրվում ուղեգրացուցակում:

Ակտերի բոլոր յերկրորդ որինակները, վորոնք քաղ-կացուլթյան ակտերի վերադաս օրգանի կողմից վերա-դարձվում են ՔԿԱԳ քաղբյուրոներին գյուղական և

ավանային խորհուրդներին լրացումներ կամ ուղղում-ներ կատարելու համար, պետք է լրացվեն կամ ուղղվեն տասն օրվա ընթացքում:

ՔԿԱ բաժնի շրջանային հրահանգչին ուշադրու-լթյամբ նայելով նյութերը, վոչ ուշ քան հաշվետու ամ-սվան հաջորդող ամսի 10-ն ուղարկում է ԺՏՀՎ շրջանա-յին տեսչին. «քաղկացուլթյան ակտերի գրանցման ամ-սական տեղեկագիր» շրջանի մասին: Դրա հետ միաժա-մանակ շրջանային հրահանգչիչը, ամսական տեղեկագրի պատճենը յերկրորդ որինակների հետ միասին ներկա-յացնում է ՆԳԺԿ վարչուլթյան քաղկացուլթյան ակտերի բաժնին վիճակագրական նախնական վերամշակուլթյան համար:

Քաղկացուլթյան ակտերի հանրապետական բաժինը ռզտագործելուց հետո մի ամսվա ժամկետում յերկրորդ որինակներն ուղարկում է ԺՏՀՎ օրգանին. շրջանային հրահանգչիչը նախքան յերկրորդ որինակներն ուղարկելը յուր մոտ կազմում է առանձին տեսակի գրանցումների համար օրագիր, ցույց տալով ստացված ակտերի №№-ը, ակտերի ընդհանուր քանակը և յերկրորդ որի-նակները ՆԳԺԿ վարչուլթյան ՔԿԱ բաժնի ներկայաց-նելու ժամանակը:

### ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԳ

Գործող գրքերի և ՔԿԱԳ-ի օրգանների արխիվը պա-հելու կարգը

Քաղկացուլթյան ակտերի և վկայականների բլանկ-ների գրքերը մինչ գործառնական տարվա վերջը պահ-վում են քաղաքային ՔԿԱԳ-ում և գյուղական խոր-հուրդներում. գործառնական տարվա վերջին, վոչ ուշ քան հաջորդ տարվա հունվարի 10-ը բոլոր գյուղական և ավանային խորհուրդները քաղկացուլթյան ակտերի գրքերը և վկայականների հիմքերի գրքերը հանձնում են

ՆԳՓԿ չըջանային որգանների ՔԿԱ-ի արխիվները, վորտեղ պահվում են նաև չըջանի բոլոր դյուղերի, հին մետրիկական-յեկեղեցական գրքերը: Քաղաքացիական կացության ակտերի բյուրոներն անցած տարիների քաղակտերի գրանցումների նաև մետրիկական (յեկեղեցական) գրքերը պահում են քաղաքային արխիվներում. Մննդյան, հայրությունը ճանաչելու և ամուսնության գրքերը պահպանելու ժամկետ սահմանվում է 75 տարի, մահվան, ամուսնալուծության, անուն կամ ազգանուն փոխելու և վորդեգրությանը— 50 տարի:

Ակտերի գրքերի և բլանկների պահպանելու ժամկետը լրանալուց հետո նրանք վոչնչացվում են. այդ մասին կազմվում է համապատասխան ակտ— ՔԿԱ բաժնի չըջրահանգչի ներկայությամբ:

Ակտերի առաջին որինակները պահվում են չըջանային կենտրոնում, իսկ Յերևան, Լենինական և Կիրովական քաղաքներում ՔԿԱԳ-ի բյուրոներում: Պատճեններն ուղարկվում են քաղաքացիական կացության ակտերի բաժնին:

Արխիվի պահպանման պատասխանատվությունը չըջաններում ընկնում է արխիվարիտուս-գործավարների վրա, Յերևան, Լենինական և Կիրովական քաղաքներում քաղկացության ակտերի գրանցման բյուրոների վարիչների վրա:

Արխիվը նոր նշանակված արխիվարիտուս-գործավարին, ՔԿԱԳ բյուրոյի վարիչին հանձնելու դեպքում կազմվում է հանձնող-ընդունելության ցուցակ, վորը պահվում է համապատասխան ՔԿԱԳ գործերում: Արխիվը ընդունվում է ըստ յեղած ցուցակի. արխիվը ընդունող անձը պարտավոր է ստուգել այն. յեթե արխիվը հանձնելու ժամանակ կհայտնաբերվի գրքերի կորուստ, գրանցված ակտերի պակաս կամ նրանց փչացում, կազմվում է հատուկ ակտ և մեղավոր անձը յենթարկվում է քրեական պատասխանատվության:

Ակտերի արխիվային գրքերը պետք է պահվեն այդ նպատակի համար հարմարեցված շենքում, յեթե անհնար է արխիվի համար առանձին շենք հատկացնել, այն դեպքում գրքերը պահվում են առանձին պահարաններում փականքի տակ:

Գրքերը պետք է դասավորված յինեն ըստ տարիների, յորաքանչյուր ակտ առանձին, համապատասխան ալֆավիտով:

Արխիվում գտնվող բոլոր ակտերի գրքերի համար կազմվում է ճշգրիտ ցուցակ: Ակտերի գրքերի յերկրորդ որինակները պահվում են քաղաքացիական կացության ակտերի հանրապետական բաժնի արխիվում վերը նըշված կարգով:

Ակտերի գրանցումների յերկրորդ որինակների պահպանման ժամկետը նույնն է ինչ վոր առաջին որինակներինը: Յույց տրված ժամկետը լրանալուց հետո յերկրորդ որինակները վոչնչացվում են համապատասխան ակտ կազմելու միջոցով:

#### ԾՆՆԴՅԱՆ ԲԼԱՆԿԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Սյունյակ 1, 2, 3 և 4՝ ցույց է տրվում ծնված յերեսխայի ազգանունը, անունը, սեռը և ժամանակը:

Սյունյակ 5— յեթե մայրը միաժամանակ ծնել է զույգ կամ 3 յերեսխա, այդ դեպքում «զույգ» կամ «յեսույակ» խոսքերից վորևե մեկն ընդգծել: Մի յերեսխա ծնված յինելու դեպքում այդ սյունյակը չի լրացվում:

Սյունյակ 6— լրացվում է միայն այն դեպքում, յերբ յերեսխան մեռած է ծնվել: (Տառերով գրվում է «ծնվել և մեռած»):

Սյունյակ 7, 8 և 9— ձախ կողմի կեսի մասում ցույց է տրվում հոր ազգանունը, անունը և հայրանունը՝ աջ մասում՝ յերեսխայի մոր ազգանունը, անունը և հայրանունը:

Սյունյակ 10— ձախ կողմի մասում տառերով գրվում է հոր ազգությունը— հայ, թուրք, ռուս և այլն: Չպետք

ե ազգութիւնը խառնել կրօնի հետ (որինակ՝ փոխանակ  
ցույց տալու ազգութիւնը՝ «հայ», «թուրք» — չգրել  
«լուսավորչական», «մահմեդական» կամ ազգութիւնը  
կապել այն հանրապետութեան — շրջանի հետ, վորտեղ  
ապրում է հարցաքննվողը (որինակ՝ թուրք չի կարելի  
ասել միայն նրա համար, վոր նա ապրում է Ադրբեջանի  
նՍՀ-ում, ռուսին նրա համար՝ վոր ապրում է Մոսկվա-  
յում): Աջ կողմի կես մասում ցույց է տրվում յերեխայի  
մոր ազգութիւնը:

Սյունյակ 11 — ձախ կողմի մասում թվանշաններով  
ցույց է տրվում հոր լրացած տարիքը, աջ մասում՝ մոր  
լրացած տարիքը:

Սյունյակ 12 — ցույց է տրվում թե ծնողներն ինքնու-  
րույն աշխատանք ունե՞ն արդյոք, յեթե ունեն, ընդգծ-  
վում է «այո» բառը, յեթե վոչ՝ «վոչ» բառը: Յեթե ծը-  
նողներից վորեւէ մեկը ստանում է կենսաթոշակ կամ  
թոշակ, նա հավասարեցվում է ինքնուրույն աշխատանք  
ունեցողներին, ընդգծվում է այս սյունյակի «այո» բա-  
ռը:

Սյունյակ 13 — առաջին մասում ցույց է տրվում ծը-  
նողների զբաղմունքը, այսինքն մասնագիտութիւնը,  
պաշտօնը, արհեստը, որինակ՝ մեքենավար, դյուլխոր-  
հրդի քարտուղար, հյուան, բժիշկ, ուսանող, տնայնա-  
գործ, փականագործ, դռնապան, մաքրող: Զբաղմուն-  
քի վերաբերյալ հարցին անհրաժեշտ է ճշգրիտ ցույց տալ  
թե ինչ աշխատանք է կատարում: Անթույլատրելի յե  
զբաղմունքի ճշգրիտ անունը ցույց տալու փոխարեն զա-  
նազան անորոշ նշումներ կատարել, ինչպես որինակ՝  
«մետաղագործ», «չինարարութեան բանվոր», «խորհրդ-  
դային ծառայող»: Սյունյակի յերկրորդ մասում գրվում  
է այն հիմնարկութեան, ձեռնարկութեան, կոլտնտեսու-  
թեան անունը, վորտեղ աշխատում են ծնողները: Յեթե  
ծնողներն ապրում են ուրիշ խնամքի տակ, այս սյուն-  
յակի յերկու մասն ել լրացվում են այն անձանց վերաբե-

րյալ տեղեկութիւններով, վորտեղ խնամքի տակ գտնու-  
վում են ծնողները:

Սյունյակ 14 — սյունյակի ձախ կողմի կես մասում  
ցույց է տրվում այն վայրի (քաղ., գյուղ) անունը, վոր-  
տեղ մշտապես ապրում է հայրը, աջ մասում այն վայ-  
րի անունը, վորտեղ մշտապես ապրում է մայրը:

Սյունյակ 15 — ցույց է տրվում, թե ինչքան ժամա-  
նակ է, վոր տվյալ վայրում ապրում են ծնողները:

Սյունյակ 16 — գրում են ա) դիտողութիւն — յե-  
թե մայրը հրաժարվել է կամ չի կարող ասել յերեխայի  
հոր անունը, բ) յեթե ընկեցիկ յերեխա յե գրանցվում,  
այն անձանց կամ հիմնարկութեան անունը, ուր հանձն-  
վում է (կրթութեան ու դաստիարակութեան) գտնված  
յերեխան, բացի այդ, այս սյունյակում ցույց է տրվում  
յերեխայի ծննդեան մասին բժշկական վկայականի №-ը,  
ամիս, ամսաթիվը և տարին:

Սյունյակ 17 — Լրացվում է այն դեպքում, յերբ  
հայտարարութիւն տվողները յերեխայի ծնողները չեն:  
Ցույց է տրվում յերեխայի ծնունդը գրանցելու մասին  
հայտարարութիւն տվող անձանց ազգանունը, անունը  
և բնակավայրը:

Սյունյակ 18 — այս սյունյակում ստորագրում է յե-  
րեխայի ծնունդը գրանցելու մասին հայտարարութիւն  
տվող անձնավորութիւնը:

### ՄԱՀՎԱՆ ԱԿՏԻ ԲԼԱՆԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սյունյակ 1, 2, 3, 4 (ազգանուն, անուն, հայրա-  
նուն, սեռ), 5) ազգութիւն, 8) ապրուստի միջոցները,  
9) զբաղմունքը լրացվում են այն կարգով, ինչ կարգով  
վոր ծննդեան գրանցումը (տես ծննդեան մասին գիրքը):

Սյունյակ 6 — ցույց է տրվում մահանալու ամիսը,  
ամսաթիվը, այս դեպքում չպետք է մահանալու ժամա-  
նակը չփոթել մահվան գրանցման ժամանակի հետ:

Սյունյակ 7 — ցույց է տրվում մահացածի մահանա-

լու որը լրացած լրիվ տարիները: Մինչ 5 տարեկան հասակ ունեցող մահացած յերեխաների համար ցույց տալ յերբ և ծնվել, տարի, ամիս, ամսաթիվ:

Սյունյակ 10— ցույց և տրվում մահացածի վոչ թե մահանալու վայրը, այլ նրա մշտական բնակավայրը. որինակ՝ գրանցվողը հիվանդության ժամանակաշրջանում գտնվել և ժամանակավորապես չըջկենտրոնի կամ վորևե քաղաքի հիվանդանոցում և այնտեղ մահացել և, բայց մշտապես ապրել և գյուղական վայրում, այս սյունյակում պետք և նշանակված լինի վերջինս, այսինքն այդ գյուղական վայրի անունը:

Սյունյակ 11— ցույց և տրվում թե ինչքան ժամանակ և ապրել մահացածը մահվան գրանցման վայրում:

Սյունյակ 12— ցույց և տրվում այն պատճառները, վորից առաջացել և մահը: Մահվան պատճառները գրվում են այս սյունյակում բժշկական վկայականների հիման վրա, իսկ այն վայրերում, ուր բժիշկ չկա, հայտարարություն տվողի և վկաների ասածների հիման վրա:

Սյունյակ 13— նշանակվում և ներկայացրած բժշկական վկայականի համարը և բուժող հիմնարկի անունը կամ բժշկի ազգանունը, յեթե մահը տեղի յե ունեցել վոչ հիվանդանոցում: Բժշկական վկայականի վրա անպայմանորեն նշանակվում և համապատասխան գրանցման համարը և ժամանակը:

Սյունյակ 14— գիտողություն և արվում վայրի մասին, յեթե մահը տեղի յե ունեցել վոչ այն գյուղում կամ շրջանում, վորտեղ ապրել և մահացածը, նաև յեթե գրանցումը կատարված և ժողդատարանի վորոշման, միլիցիայի արձանագրության և այլ փաստաթղթի հիման վրա:

Սյունյակ 15— գրանցվում և հայտարարություն տվողի ազգանունը, անունը և հասցեն:

Սյունյակ 16— հայտարարություն տվողի ստորա-

գրությունը, բժշկական վկայական չլինելու դեպքում հայտարարություն տվողների և վկաների ստորագրությունը:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ԲԼՍԵԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Տոմարագրողը պարտավոր և ամուսնացողներին կարգալ ամուսնության, ընտանիքի և ինամակալության որենսգրքի հոգվածները.—

Հոդվ. 4— ամուսնությունը տոմարագրելու համար պահանջվում է՝

ա) ամուսնությունը տոմարագրելու փոխադարձ համաձայնությունը

բ) ամուսնական հասակ ունենալը և

գ) ինքնությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնելը:

Հոդվ. 5.— Ամուսնական հասակ սահմանվում և կանանց համար— 16 տարին, տղամարդկանց համար 18 տարին:

Հոդ. 6.— Ամուսնացողները տոմարագրվել չեն կարող՝

ա) յեթե ամուսնացողներից թեկուզ մեկ կողմն արդեն իսկ տոմարագրված կամ չտոմարագրված ամուսնական հարաբերության մեջ և մի ուրիշի հետ.

բ) այն անձերի միջև, վորոնցից թեկուզ մեկը սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ և ճանաչված.

գ) ուղիղ վերնթաց կամ վայրենթաց գծով ազգականության մեջ գտնվող անձերի միջև (որինակ հայրը և աղջիկը, մայրը և վորդին, պտպը և թոռը) այլ և հարազատ ու խորթ քույրերն ու յեղբայրները, ինչպես նրանք, վորոնք ծագում են ընդհանուր հորից և մորից, այնպես ել նրանք, վորոնք կամ ընդհանուր հայր ունեն, բայց տարբեր մայրեր, կամ ընդհանուր մայր, բայց տարբեր հայրեր:

Յեվ քրեական որենսգրքի հետևյալ հոդվածները՝

113. Ամուսնութեանը խոչընդոտ հանդիսացող հանգամանքները թագցնելու, այլ և քաղաքացիական կացութեան ակտերի տոմարագրութեանը վարող մարմիններին սուտ տեղեկութեաններ հաղորդելու համար, ազատութեանը զրկվում են կամ հարկադիր աշխատանքի յեն դատապարտվում մինչև մեկ տարի ժամանակով, կամ տուգանվում մինչև մեկ հազար ուրբ.:

176. Ուրիշին վեներական ախտով վարակելու համար, այն անձի կողմից, վոր տեղյակ է իր հիվանդ լինելու մասին, ազատութեանից զրկել մինչև յերեք տարի ժամանակով:

Սյունյակ 1— ցույց է տրվում այն ազգանունը, վոր ընդունում են ամուսնացողները ամուսնանալու միջոցին: Յեթե ամուսնացողները կոչվելու յեն մի ընդհանուր ազգանունով, այն դեպքում այդ ազգանունը գրվում է ամբողջ գծի վրա, իսկ յեթե ամուսնացողները մնում են իրենց մինչև ամուսնական ազգանունով, այդ դեպքում ամուսնու ազգանունը գրվում է այս սյունյակի ձախ մասում, իսկ կնոջ ազգանունը՝ աջ մասում:

Սյունյակ 2— ձախ մասում գրվում է տղամարդու մինչ ամուսնական ազգանունը, իսկ աջ մասում կնոջ մինչ ամուսնական ազգանունը:

Սյունյակ 3 և 4— ցույց է տրվում ամուսնացողների անունները և հայրանունները:

Սյունյակ 5— ազգութեանը, 10— ապրուստի միջոցները, 11— գրադմունք, լրացվում են այն կարգով, ինչ կարգով ծննդյան ակտը (տես ծննդյան գիրքը):

Սյունյակ 6— ցույց է տրվում ինչպես կնոջ, նույնպես և ամուսնու լրացած տարիքը:

Սյունյակ 7— ցույց է տրվում ամուսնացող կնոջ ու տղամարդի ընտանեկան գրութեանը, մինչև տվյալ ամուսնութեան տոմարագրումը: Անհրաժեշտ է ընդգծել «ամուրի», «այրի», «բաժանված» բառերից մեկը:

Սյունյակ 8— ցույց է տրվում ամուսնացողների յե-

րեխաների ընդհանուր թիվը, յեթե այդպիսիք ունեն նախկին ամուսնութեանից:

Սյունյակ 9— բառերով ցույց է տրվում թե քանի յերրորդ անգամն է ամուսնանում նրանցից յուրաքանչյուրը՝ որինակ առաջին, յերկրորդ, յերրորդ:

Սյունյակ 12— ցույց է տրվում ամուսնացողների հասցեն, այսինքն այն հասցեն վորտեղ պետք է ապրեն ամուսնութեանից հետո, յեթե նրանք առանձին առանձին պիտի ապրեն, այդ դեպքում ցույց է տրվում մարդու և կնոջ հասցեները:

Սյունյակ 13— գրանցվում են այն տեղեկութեանները, վորոնց համար գրքում հատուկ (առանձին) սյունյակ չկա:

Սյունյակ 14— թվարկվում են նրանց ինքնութեանը հաստատող փաստաթղթերը, վորոնք ներկայացվել են ամուսնացողների կողմից: Ամուսնութեանը գյուղխորհուրդներում տոմարագրելու դեպքում, վորտեղ հայտնի յե ամուսնացողների ինքնութեանը, ինքնութեանը հաստատող փաստաթղթեր ներկայացնել չի պահանջվում: Այս դեպքում հիշատակվում է՝ «ամուսնացողների ինքնութեանը հայտնի յե»:

Սյունյակ 15— ամուսնացողներին կարգացվում է ամուսնութեան, ընտանիքի և ինամակալութեան որենագրքի հոգավածները և գիմումի տեքստը:

Սյունյակ 16— լրացվում է ամուսնացողների և վկաների ստորագրութեաններով: Ամուսնացողները ստորագրում են մինչ ամուսնական ազգանունով:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ԲԼԱՆԿԸ  
ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սյունյակ 1— ում ցույց է տրվում բաժանվողների այն ազգանունը, վորով նրանք պիտի կոչվեն բաժանվելուց հետո: Յեթե նրանք յերկուսն էլ պահպանելու յեն ա-

մուսնական ազգանունը, այդ դեպքում ամբողջ սյուն-  
յակում միանգամից գրվում է այդ ազգանունը:

Սյունյակ 2-ում ցույց է տրվում այն ազգանուններ-  
ը, վորոնք կրել են բաժանվողներն ամուսնության ժա-  
մանակ: Յեթե բաժանվողները կրել են տարբեր ազգա-  
նուններ, այդ դեպքում սյունյակի ձախ կողմում ցույց  
է տրվում ամուսնու ազգանունը, աջ մասում կնոջ:

Սյունյակ 3-ում ցույց է տրվում բաժանվող զույ-  
գերի անունները և հայրանունները:

Սյունյակ 4-ում ցույց է տրվում բաժանվողների  
տարիքը, այսինքն ամուսնայուծության որը լրացած  
տարիները (որինակ՝ ցույց է տրվում վոչ թե 28 տա-  
րեկան 4 ամսական, այլ 28 տարեկան):

Սյունյակ 5-ում (ազգություն), 9—ապրուստի մի-  
ջոցները, 10—գրադմունքը— լրացվում են այն կարգով,  
ինչ կարգով ծննդյան ակտի գրանցումը (տես ծննդյան  
գրանցման կարգը):

Սյունյակ 6-ում տառերով ցույց է տրվում թե բա-  
ժանվող զույգերից յուրաքանչյուրը քանի անգամ է ամուսնացած յեղել մինչև ամուսնայուծությունը:

Սյունյակ 8-ում «Ա» լիտերի տակ թվանշանով  
ցույց է տրվում բաժանվող ամուսինների խնամքի տակ  
գտնվող յերեխաների թիվը:

Լիտեր «Բ»-ի տակ ցույց է տրվում հոր և մոր  
(առանձին-առանձին) խնամքի տակ մնացող յերեխանե-  
րի անունները և տարիքը: Այս սյունյակը լրացվում է  
միայն այն դեպքում, յերբ այդ մասին վեճ չկա ծնողնե-  
րի միջև:

Լիտեր «Գ»-ի տակ գրանցվում է ծնողների համա-  
ձայնությունն առ այն, թե վորը նրանցից, ինչ չափով  
պիտի վճարում կատարի յերեխաների, նաև անաչխա-  
տունակ ամուսնու ապրուստի համար: Նման գրանցումը  
կատարվում է միայն այն դեպքում, յերբ ամուսինները  
լրիվ համաձայնության են յեկել: Յեթե ամուսինների  
միջև համաձայնություն չի կայացել, այն դեպքում այս

սյունյակում գրանցվում է «համաձայնություն չի կա-  
յացել, գործը տրված է դատարան»:

Սյունյակ 11-ում ցույց է տրվում բաժանվողներից  
յուրաքանչյուրի հասցեն բաժանվելուց հետո: Յեթե  
բաժանվողները պետք է միատեղ ապրեն, այդ դեպքում  
մի ընդհանուր հասցե յե գրվում ամբողջ տողի վրա:

Սյունյակ 12- ամուսնայուծության պահին՝ բա-  
ժանվողների կողմից ներկայացված փաստաթղթերն են  
հիշատակվում (փաստաթղթի տրման ամսաթիվը, տա-  
րին և №№-ը):

Սյունյակ 13-ը լրացվում է այն դեպքում, յերբ  
բաժանվող կողմերն իրենց ամուսնությունը հաստատող  
փաստաթղթեր չունեն. այս դեպքում սյունյակը լրաց-  
վում է հայտարարության հիման վրա, հայտարարողից  
վերցնելով ստորագրություն՝ պատասխանատվության  
մասին ըստ քրեական որենսգրքի «113» հոդ.:

Սյունյակ 14-ը լրացվում է բաժանվողների ստո-  
րագրությամբ: Ըստ վորում ցույց է տրվում այն ազ-  
գանունը, վորը կրել են բաժանվողներն ամուսնության  
ժամանակ:

### ԱԶԳԱՆՈՒՆ ԿՍՄ ԱՆՈՒՆ ՓՈՆԵԼՈՒ ԱԿՏԻ ԲԼԱՆԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿՍՐԳԸ

Սյունյակ 1-ում ցույց է տրվում նոր ազգանունը,  
վորով կոչվելու յե ազգանուն կամ անուն փոխողը:

Սյունյակ 2-ում ցույց է տրվում նախկին ազգանու-  
նը, անունը, հայրանունը, վորով կոչվելիս է յեղել  
դիմողը, մինչ անուն կամ ազգանուն փոխելը:

Սյունյակ 3-ում ցույց է տրվում լրացած տարիքի  
թիվը, յեթե մի տարուց նույնիսկ մի օր է պակաս, այդ  
չլրացած տարին չի հաշվում լրացված տարիքի մեջ:

Սյունյակ 4-ում ցույց է տրվում ազգանուն կամ  
անուն փոխողի ծննդյան ճիշտ վայրը (ցույց տալ գյուղ,  
քաղաք, շրջան, մարզ, հանրապետություն):

Սյունյակ 5-ում հայտարարողի խոսքերի հիման

վրա ցույց է տրվում այն վայրերը, վերտեղ նա ապրել է վերջին հինգ տարում, ճշգրիտ հիշատակելով ամեն մի վայրում ապրելու ժամանակաշրջանը: Ծոր սյունյակի, ծանութութուն, մասում հայտարարողի բնակավայրերի մասին տված տեղեկությունների ճշտությունը հաստատող փաստաթղթերն են հիշատակվում, կամ ցույց է տրվում թե «հայտարարողի կողմից տրվող տեղեկությունները փաստաթղթերով չեն հաստատված»:

Սյունյակ 6-ում ցույց է տրվում ազգանուն կամ անուն փոխողի ընտանեկան դրույթունը:

Սյունյակ 7-ում ցույց են տրվում տեղեկություններ ազգանուն փոխողի անչափահաս յերեխաների մասին: Այս սյունյակի առաջին մասում գրվում է յերեխաների նախկին անուն ազգանունը, յերկրորդ մասում գրվում է նրանց ծննդյան ժամանակը, այսինքն՝ ամսաթիվ, ամիս, տարի և վերջապես այս սյունյակի յերրորդ մասում գրվում է նրանց ծննդյան վայրի անունը, ճշգրիտ նշանակելով գյուղը, շրջանը, քաղաքը, մարզը, հանրապետություն անունը:

Սյունյակ 8-ում (զբաղմունքը) լրացվում է այն կարգով, ինչ կարգով վոր ծննդյան ակտերի գրանցման դեպքում:

Սյունյակ 9-ում ցույց է տրվում հայտարարողի ճշգրիտ հասցեն, այն է՝ նրա մշտական բնակավայրը:

Սյունյակ 10-ում արվում է դիտողություն մյուս ամուսնու համաձայնություն մասին, ինչպես անչափահաս յերեխաների ազգանունը փոխելու, նույնպես և նրանց՝ հոր նոր անվամբ կոչվելու նկատմամբ:

Սյունյակ 11-ում ցույց են տրվում ազգանունը կամ անունը փոխողի ինքնությունը հաստատող փաստաթղթերը:

Սյունյակ 18-ը լրացվում է ազգանունը կամ անունը փոխողի ստորագրությունը: Ստորագրությունը պիտի լինի նախկին ազգանունով և անունով:

## ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՐԼԱՆԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սյունյակ 1-ում ցույց է տրվում հոր և դիմողի ազգանունը, անունը և հայրանունը:

Սյունյակ 2-ում հոր և դիմողի ծննդյան տարին և ամիսն ու ամսաթիվը:

Սյունյակ 3-ում հոր և դիմողի պրոֆեսիան:

Սյունյակ 4-ում ցույց է տրվում հոր և դիմողի ճիշտ հասցեն:

Սյունյակ 5-ը լրացվում է ծննդյան մասին ներկայացված փկայականի հիման վրա, յեթե դիմումը տրվում է ծնունդը տոմարագրելուց հետո, կամ բժշկի նազմից Հղիության ժամանակի մասին տված փկայականի հիման վրա, յեթե դիմումը տրվում Հղիության ժամանակ:

Լրացված դիմումը կարողացվում է դիմողին, մորը և ստորագրում է 6-րդ սուբյակում, իսկ հայր կոչվող անձնամուտությունը սահմանված ձևով ծանուցագիր է ուղարկվում:

Սյունյակ 7-ը լրացվում է հորեց պատասխան ստանալուց հետո կամ մեկ ամիս անցնելուց հետո ատասխան չստանալու դեպքում: Այդտեղ գրանցվում է՝ «քաղաքացի այս ինչը հոնն ճանաչել է յերեխայի հայր» կամ «քաղաքացի այս ինչն իրեն չի ճանաչել յերեխայի հայր» կամ «հայր կոչված քաղաքացուց պատասխանը չի ստացված»:

Դիմումների գրքերը պահվում են հատուկ տեղ, արժեքավոր թղթերի հետ միասին: Դիմումների գրքերն ի չարը գործադրողները յենթարկվում են ըրեական պատասխանատվության:

Դիմումի բլանկը փչացնելու դեպքում յուրաքանչյուր թերթի վրա գրվում է «փոչնչացված է» և ստորագրվում պաշտոնատար անձի կողմից (գյուղխորհրդի

քարտուղար, ՔԿԱԳ գործավար), — հաստատվում կնիքով և ցույց է տրվում ժամանակը:

Դիմումի ձախ անկյունում անպայման պետք է խփվի գյուղխորհրդի կամ ՔԿԱԳ-ի շտամպը: Շտամպը պետք է միանգամայն պարզ և ընթեռնելի լինի, վորպեսզի անմիջապես իմացվի ՔԿԱԳ-ի տեղական որգանի անունը:

### ՎՈՐԴԵԳՐՈՒԹՅԱՆ ԲԼԱՆԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սյունյակ 1-ում ցույց է տրվում այն ազգանունը, վորով պիտի կոչվի վորդեգրվողը վորդեգրվելուց հետո, (այսինքն մնալով յե արդյոք նա յուր նախկին ազգանունով, թե ընդունում է վորդեգրողի ազգանունը):

Սյունյակ 2-ում ցույց է տրվում այն հայրանունը, վորը պետք է կրի վորդեգրվողը վորդեգրվելուց հետո՝ կրելով յե նախկին հոր անունը, թե նոր վորդեգրողի անունը:

Սյունյակ 3-ում ցույց է տրվում վորդեգրվողի այն ազգանունը, անունը և հայրանունը, վորը կրել է նա մինչ վորդեգրվելը:

Սյունյակ 4-ում ցույց է տրվում վորդեգրվողի ծննդյան ամսաթիվը, ամիսը և տարին:

Սյունյակ 5-ում ցույց է տրվում վորդեգրվողի ծննդյան վայրը (գյուղ, քաղաք, շրջան):

Սյունյակ 6-ում ցույց է տրվում վորդեգրվողի ծնողների ազգանունը, անունը և հայրանունը: Յեթե ծնողները կամ նրանցից վորևե մեկն անհայտ են, համապատասխան զետողություն է արվում՝ «հայրը» կամ «մայրը» անհայտ են»:

Սյունյակ 7-ում զբաղմունքը — ցույց տալ վորդեգրվողի ծնողների ճշգրիտ մասնագիտությունը, պաշտոնը, արհեստը, վորոնք նրանց ապրուստի հիմնական միջոցներ են տալիս:

Այս սյունյակը լրացվում է ճիշտ այնպես, ինչպես նույն սյունյակը ծննդյան մատյանում:

Սյունյակ 8-ում ցույց է տրվում վորդեգրողների ազգանունը, անունը և հայրանունը:

Սյունյակ 9-ում վորդեգրողի զբաղմունքը լրացվում է 7-րդ սյունյակի լրացման համար ցույց տված կարգով:

Սյունյակ 10-ում ցույց է տրվում վորդեգրողների մշտական հասցեն:

Սյունյակ 11-ում նշումներ են արվում այն առանձին դեպքերի մասին, վորոնք կծագեն ակտի տոմարագրության միջոցին (պահին), և ցույց է տրվում իմնամակալության այն որգանի անունը, վորը վորոշում է կայացրել վորդեգրության մասին, ինչպես և այդ վորոշման №-ը, ամիս, ամսաթիվ, տարին:

Սյունյակ 12-ը լրացվում է վորդեգրողների ստորագրությամբ:

ԽՍՀՄ Ներքառքժողկոմատի Քաղաքաց. կացուք. Ակտերի Բաժնի պետ՝ Ա.Լ.ԻՆՎՍԿԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0977286

19.

11

27196